

Կը տեսնուի թէ Տիգրանը Լուկուլլոսի հետ պատերազմու-
յու համար Հայկական զինւորական կազմակերպութիւնը պատ-
րաստած է տարասեւ տարրերէ :

Եւ այսպէս, հին դարերէ սկսեալ, հին Հայերը հին Քիւր-
դերու հետ կազմակերպուած են զինւորականապէս, քաղաքա-
կանապէս, բնակակցութեամբ միեւնոյն հողին վրայ. առանց
կորսնցնելու ազգայնականութիւնը. ինչպէս տեսանք Հայերէ
զատ այդ տարասեւ տարրերը ի մի ձուլուած՝ այսօր կը կոչուին
Քիւրդ անուան տակ, իսկ Հայերը այն օրերէն մինչեւ այսօր
Հայ են կոչուած ու մնացած են Հայ, առանց ցեղական որո-
շումներու՝ ազգային կազմակերպութեան մը մէջ:

Ամերիկեան անսիրօրփէտի մը հրատարակուած 1882ին՝
հիմնուելով Քիւրդիստանի միջի միսիոնարական ուսումնասի-
րութիւններուն վրայ, Քիւրդերու ծագումի մասին կը գրէ .

«Անտարակոյս Քիւրդական ծագումնային կազմակերպու-
թիւնը եղած է ցեղական, և տիրող ցեղերու սովորութիւնները
եղած են թափառիկ ու հովուական: Քիւրդերու դասաւորու-
թիւնը, բնդհանուր գիծերու մէջ կարելի է րամնել երկուքի՝
նստակեաց (սէտանթէս), թափառական (նօմատ) » :

Ուրեմն այս տեսակէտով, ծագումին արեւակցական է,
բայց ցեղ ցեղ. իսկ հին հայրենիքը՝ նստակեացներին է. ու
թափառիկներունը՝ սահմանակիցներու երկիրները՝ ուր անոնք
կ'երթան ու կու գան, և յարմար պարագաներուն կը հանգստա-
նան, իէս նստակեաց ու կէս թափառիկ վիճակով: Ահա Քիւր-
դերու տարածումի մէջ պատճառն այ :

(Երես 135). «Նախ Տիգրանը բանաւոր կշռադատումի կու գայ երբ
կը տեսնէ իր շուրջը բոլոր Հայկական գունդերը, ինչպէս Կորդուացիներ-
ունը, Մէտիսցի թագաւորներունը, Ատիապէսիները, Արաբ խաշնարած-
ներու հեծելազօրքը, ևն. » :